

Թրքենիզացված քարտերով կատարվող (NFC) վճարումներ

ACBA Digital հավելվածի Android օգտատերերի համար գործում է NFC վճարումների հնարավորություն:

NFC վճարումներն իրենցից ներկայացնում են սմարթֆոնով անհայտ վճարումներ: Հաճախորդից ընդամենը պահանջվում է POS տերմինալին մոտեցնել հեռախոսը և կատարել վճարում:

Այն հասանելի է միայն Android օպերացիոն համակարգերով սմարթֆոնների համար (Android 5 և բարձր):

Կիրառելի է միայն Բանկի կողմից թողարկված Visa տեսակի բոլոր քարտերի համար՝ բացառությամբ Visa Business տեսակի: Վճարումները կարող են իրականացվել աշխարհի բոլոր առևտրի կետերում, որտեղ սպասարկվում են Visa քարտեր և որտեղ տեղադրված POS տերմինալը contactless է, այսինքն՝ սպասարկում է առանց կոնտակտի քարտեր:

Մինչև 10 քանակի վճարումներ հնարավոր է կատարել նաև սմարթֆոնում ինտերնետի բացակայության դեպքում, իսկ ինտերնետի հասանելիության ժամանակ վերալիցքավորվում են թրքենների համարները:

!!!

Ծառայությունից օգտվելու համար սմարթֆոնը պետք է ունենա NFC վճարման հնարավորություն, իսկ քարտի թվայնացման/թրքենիզացման և վճարումներ կատարելու համար այն պետք է միացված լինի

!!!

Քարտի թրքենիզացում/թվայնացում



Քարտը թվայնացնելու/թրքենիզացնելու համար անհրաժեշտ է սմարթֆոնի կարգավորումներից միացնել NFC կոճակը: Այնուհետև «Քարտեր» բաժնից ընտրել այն Visa տեսակի քարտը, որով ցանկանում եք իրականացնել NFC վճարումները և սեղմել «Ակտիվացնել սմարթֆոնով վճարումը» կոճակը: Գործողությունն անհրաժեշտ է կատարել մեկ քարտի համար մեկ անգամ

1



Պայմաններին ծանոթանալուց և հաստատելուց հետո քարտը սկսում է թվայնացվել

2



Հաջորդ փուլում համակարգը ներկայացնում է գործարքի հաստատման մեթոդը:

Եթե հեռախոսն ունի ապաբլոկավորման ակտիվացրած պաշտպան իչ որևէ ֆունկցիա (Fingerprint, FaceID, PIN, Pattern կամ այլ), համակարգը ավտոմատ ճանաչում է այդ ֆունկցիան և հաստատման ներկայացնում անվտանգ ապաբլոկավորման այդ մեթոդը, ինչը նշանակում է, որ գործարքներ կատարելիս անհրաժեշտության դեպքում նույն հաստատման մեթոդն է գործելու: Եթե հեռախոսը չունի ապաբլոկավորման ակտիվացրած պաշտպանիչ որևէ ֆունկցիա, համակարգը կառաջարկի ընտրել դրամապանակի PIN կոդ, տարբերակը և սահմանել այն: Տվյալ PIN կոդն օգտագործվելու է գործարքներ կատարելիս, երբ կպահանջվի լրացուցիչ հաստատում իրականացնել:

3

!!!

Բանկը խստորեն խորհուրդ է տալիս մշտապես ունենալ հեռախոսների վրա ակտիվացրած բիոմետրիկ պաշտպանիչ ապաբլոկավորման հնարավորություն և գործարքները հաստատել այդ մեթոդով

!!!

!!!

Վերոնշյալ փուլն իրականացվում է միայն 1 անգամ՝ առաջին քարտը թղթենիզացնելիս: Մնացած քարտերի թղթենիզացման ժամանակ համակարգը հիմք է ընդունում արդեն ընտրված մեխանիզմը և կիրառում բոլոր այլ քարտերի համար: Եթե ընտրվել է այնպիսի մեխանիզմ, որը հետագայում պետք է փոխել, անհրաժեշտ է ջնջել ACBA Digital հավելվածը և կատարել նույն գործողությունները ինչ առաջին թղթենիզացված քարտի դեպքում (հավելվածը ջնջելու դեպքում թղթենները վերանում են)

!!!



Գործարքների հաստատման մեխանիզմի ընտրությունից հետո ստեղծվում է թղթենը և ցուցադրվում հեռախոսի էկրանին: Այն ունի քարտի դիզայնի տեսք: Սմարթֆոնը պատրաստ է վճարումներ կատարելու համար

4

Քարտի վրա հաջողությամբ NFC վճարումներն ակտիվացնելուց հետո տվյալ քարտի էջում կանհետանա «Ակտիվացնել NFC վճարումը» կոճակը և փոխարենը կհայտնվի «NFC վճարում» կոճակը

5



Վճարում առանց հավելված մուտք գործելու

Վճարում կատարելու համար ACBA Digital բջջային հավելվածը բացելու անհրաժեշտություն չկա: Անհրաժեշտ է պարզապես ապաբլոկավորել սմարթֆոնը (device unlock)՝ օգտագործելով հեռախոսի ապաբլոկավորման պաշտպանիչ մեթոդը (Fingerprint, Face ID, PIN կամ այլ) և այն մոտեցնել POS տերմինալին՝ այնպես, ինչպես դա կկատարվեր առանց կոնտակտի քարտերի դեպքում, այսինքն՝ POS տերմինալի վրա գործարքի գումարը հավաքելուց հետո, երբ պահանջվում է արդեն մոտեցնել քարտը կամ սմարթֆոնը: Գործարքը կիրականացվի միանգամից և POS տերմինալը կտալի համապատասխան անդորրագիր, իսկ սմարթֆոնի վրա նույնպես կերևա վճարման տվյալների հաջող փոխանցման հաղորդագրություն:

Որոշ դեպքերում՝ կախված սմարթֆոնի ապաբլոկավորված լինելու ժամանակից, այն POS տերմինալին պահելուց հետո կարող է պահանջվել գործարքը հաստատել վերոնշյալ հաստատման մեթոդով կամ դրամապանակի PIN կոդը հավաքելով և 2-րդ անգամ սմարթֆոնը մոտեցնելով տերմինալին: Այս դեպքում գործարքը կատարվում է 2 քայլով:



Վճարում հավելվածի ներսից


Այս տարբերակը նախատեսված է այն դեպքերի համար, երբ օգտագործողն ունի մեկից ավելի թղթենիզացված քարտեր և չի ցանկանում վճարումն իրականացնել հիմնական թղթենով, այլ կոնկրետ որևէ գործարք ցանկանում է իրականացնել՝ նշելով կոնկրետ թղթենը (հետևաբար նաև քարտը, որով ցանկանում է կատարել վճարումը):

Հավելվածը բացելուց և մուտք լինելուց հետո օգտագործողը կարող է հավելվածի հիմնական էջից կամ թղթենիզացված քարտի էջից ընտրել «NFC վճարում» կոճակը, առաջարկվող ցանկից ընտրել ցանկալի թղթենը, սեղմել «վճարել» և պահել սմարթֆոնը POS տերմինալին: Գործարքը կիրականացվի միանգամից և POS տերմինալը կտալի համապատասխան անդորրագիր, իսկ սմարթֆոնի վրա նույնպես կերևա վճարման տվյալների հաջող փոխանցման հաղորդագրություն:

Այս պարագայում ևս որոշ դեպքերում՝ կախված սմարթֆոնի ապաբլոկավորված լինելու ժամանակից, այն POS տերմինալին պահելուց հետո կարող է պահանջվել գործարքը հաստատել և 2-րդ անգամ սմարթֆոնը մոտեցնել տերմինալին:



Թղթենների կառավարում



Թղթենը/թվային քարտը կառավարելու համար հավելվածի մենյուից անհրաժեշտ է ընտրել NFC բաժինը և տեսնել թվային քարտերը (թղթենները), որոնցով կարելի է իրականացնել հետևյալ գործողությունները.

- հեռացնել թղթենը*
- փոխել հիմնականը (change default)
- դիտել գործարքների պատմությունը
- փոխել դրամապանակի PIN-ը, եթե առաջին թղթենն այսպես է ստեղծվել

* հեռացնելու դեպքում քարտի թղթենը ջնջվում է և անհրաժեշտության դեպքում տվյալ քարտի համար կորից պետք է ակտիվացնել NFC վճարում

